

## ԳԵՈՐԴԻ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ

### IX

(Վ. և բ. ջ.)

Վաթունական թուականներից սկսած, երբ ոռւսիտքնակ հայ երիտասարդներից շատերը Ռուսաստանում և արտասահմանում բարձրագոյն կրթութիւն ստանալուց յետոյ հայրենիք վերադարձան, մեր ժողովրդի մէջ բուռն ուժով երևան եկաւ ուսում ստանալու ձգտումը: Թիֆլիզում և այլ տեղ եղած պետական սահաւաթիւ դպրոցները հայ պատանիներով լցուեցան և մեծ յառաջադիմութիւն ցոյց տուին ուսման մէջ: Հայ հոգևորականութիւնն էլ տեսնելով իւր ժողովրդի սէրը դէպի ուսումն ու կրթութիւնը, ինքն էլ եռանդ ցոյց տուեց և ամեն կերպ նպաստեց ալդ ձգտմանը: Սկըզբում քաղաքներում և ապա գիւղերում ևս հետզհետէ բացուեցան ծխական դպրոցներ՝ ժողովրդի և հոգևորականութեան միահամուռ ջանքերով: Նախկին միջնադարեան տիրացուական ընթերցարանները տեղի տուին եւրոպական տիպի ուսումնարաններին և հայր Ժէ ճէ ռայրի ու Շփալախարի շնորհիւ աւանդած ընթերցանութեան արուեստին վիխարինեց կարդալ-գրելու և կարդացածն ու գրածը հասկանալու մեթոդը: Կովկասի հայոց ծխական դպրոցներն աւելի բազմացան ու բարգաւաճեցին երջանկալիշատակ Գէորգ IՎ կաթողիկոսի օրօք, որ քաջ ըմբռնելով ժամանակի պահանջը և իւր ժողովրդի ձգտումները, ամեն կերպ և եռանդադին օժանդակեց դպրոցական գործին և իւր բարձր հովանաւորութեան ներքոյ առաւել:

Եօթանասնական և ութունական թուականներին

այնքան շատացան ծխական-եկեղեցական դպրոցները, որ մի ամբողջ հայ ուսուցչական դասակարգ ստեղծուեց և կարիք զգացուեց թեմական տեսուչների պաշտօններ հաստատելու: 1879 թ. Վրաստանի և Խմերէթի թեմի հայ ծխական-եկեղեցական դպրոցների թեմական տեսուչ նշանակուեց հոգևոր բարձր իշխանութիւնից Գէ-որդ Բարիուղարեանը և այդ պաշտօնը վարեց մինչև 1883 թ. ամառը: Բարիսուղարեանի թեմական տեսչութեան օրօք և նրա նախագահութեամբ 1882 թ. տեղի ունեցաւ մեր առաջին և վերջին պաշտօնական ընդհանուր ուսուցչական ժողովը Թիֆլիզում: Բարիսուղարեանի մեզմ բնաւորութիւնը և վարմունքը մեծապէս նպաստեցին նրան՝ իւր գժուարին պաշտօնը յաջողութեամբ վարելու: մեր երիտասարդ դպրոցաւարտներն անմիջապէս ուսուցչական պաշտօն ստանձնելով և կեանքի խրատական փորձառութիւնից դեռ ևս զուրկ լինելով՝ այնքան էլ կարգ ու կանոնի վարժ չէին և դիւրին գործ չէր նրանց դիսցիպլինալի վարժեցնելը: Նրանցից ամեն մէկն իւր պահանջներն էր անում և իւր ցանկացածը որոնում: Նրանք համարեած ամեն աարի թողնում էին իրենց տեղերը և նոր դպրոցներ փընտում: թեմական տեսուչը պէտք է նրանց համար միշտ նոր տեղեր գտնէր և նշանակէր: Մէկի համար ոռնիկը քիչ էր, միւսին աւելի մեծ դպրոց էր ցանկալի, երբորդը գիւղից քաղաք էր ուզում տեղափոխուել, չորրորդն անպատճառ իր կնոջ հետ էր ցանկանում պաշտօն վարել, հինգերորդը միայն մի որոշ առարկայ էր կամենում դասաւանդել և ալլն: Եթէ դրա վրայ աւելացնենք և այն հանգամանքը, որ այդ երիտասարդ ուսուցիչներից շատերն էլ ի բնէ կոշտ ու կոպիտ բնաւորութեան մարդիկ էին և յամառ, կարելի է երևակայել թեմական տեսչի գրութիւնը: Սակայն ի պատիւ այն ժամանակուալ երիտասարդ ուսուցիչների պէտք է ասել, որ որքան նրանց մեծամասնութիւնն անտաշ ու բիրտ էր, այնքան էլ սիրող սիրտ և գաղափարական հոգի ունէր. պէտք էր նրանց հասկացնել, ոգեսրել և նրանք ամեն զոհողութիւն անելու պատրաստ էին: Ահա ալսպիսի գէպքերում թեմական տեսչի վարմունքի

մեղմ եղանակը նպաստում էր գործի գլուխ գալուն և լաջող ելք ունենալուն:

Բարխուդարեանի պաշտօնական զբաղմունքի շատութեամբ կարելի է բացատրել այն հանգամանքը, որ նա Փորձի I և II տարիների համարները լցնելով իւր թարգմանութիւններով, III-րդ տարին (1879) միայն մի թարգմանութիւն և մի ինքնուրոյն բանաստեղծութիւն է տալիս, (Վենետիկի վաճառական, դրամա Նէքսպիրի. №. I. Էջ 1—58, №. II. Էջ 1—74 և Գարուն Հայաստանի, բանաստեղծութիւն, №. 5. Էջ 157—158):

IV տարին միայն մի թարգմանութիւն (Փիէսկօի դաւագրութիւնը Զէսօվալում №. II. Էջ 1—4<sup>1</sup>), №. III. Էջ 1—42 №. IV. Էջ 1—56, №. V. Էջ 1—32):

V տարին միայն մի բանաստեղծութիւն և մի առակ (Վանեցու երգ. բանաստեղծութիւն, №. II. Էջ 111—112 և Բարեպաշտ մարդիկ. առակ չափահասների համար. №V—VI. Էջ 63—70):

Նէքսպիրի Վ. Ենետ կի Վաճառականը՝ բնագրից չէ թարգմանուած, այլ հաւանականորէն գերմաներէնից, թէև Բարխուդարեանը չէ մատնանիշ անում, թէ որ լեզուից է թարգմանել. քանի որ այս յայտնի երկը երկրորդ աղբիւրից է թարգմանուած, մենք էլ գանց ենք առնում քննութիւնը:

«Դարուն Հայաստանիս բանաստեղծութիւնը թէև արտաքին կազմութեամբ անհարթ է, սակայն բովանդակութեամբ բանաստեղծի ներքին զգացմանց թարգման է հանդիսանում. այս բանաստեղծութիւնը կարդալիս անմիջապէս լիշում ենք Պետքօֆիկի հայրենաշունչ ստեղծագործութիւնները և հաւանական է, որ Բարխուդարեանը դրանց ազգեցութեամբ ներշնչուած՝ արտադրած լինի «Դարուն Հայաստանին»:

«Եւ երբ մրրիկը անցի,  
Նորից փալլի արեգակ,  
Օղում հանդարա ծածանի  
Ազատութեան սուրբ դրօշակ,  
Ան ժամանակ, Հայաստան,  
Չունիմ ես այլ ճանկութիւն,  
Ազն ժամանակ սրբազան  
Հողդ ամիոփէ իմ աճիւն».

«Ֆիէսկօի դաւադրութիւնը Զէնօվայում» Շիլէրն անուանել է հասարակապետական ողբերգութիւն, որովհետև նիւթը վերցրել է Զէնօվալի կամ Գենուայի հասարակապետական կեանքից. նիւթը պատմական է և վերաբերում է տասնուվեցերորդ դարի առաջին կէսի վերջում պատահած դէպքերին։ Շիլէրն այս պատմական նիւթն ուսումնասիրում է Շտուտգարտի գինուրաբական ճեմարանում ուսանող եղած ժամանակը և ապա մշակելով 1782 թ. ուղարկում է Մանհայմ ներկալացնելու համար. սակայն թատրօնական մասնաժողովն անլարմար է գտնում ալդ գրուածքը ներկալացման համար և լեռ գործնում հեղինակին, Բանաստեղծն ողբերգութիւնը ծախում է տասնումէկ ոսկով մի հրատարակչի վրայ և գիրքը լոյս է տեսնում 1783 թ.։

Այնուհետև Շիլէրը փոփոխութեան ենթարկեց Ֆիէսկօի դաւադրութիւնը, և ալդ նոր ձևով առաջին ունգամ ներկալացուեց Մանհայմում 1784 թ.։ Ողբերգութիւնը մի քանի մասերում շեղում է նիւթի պատմական ճշտութիւնից. օրինակ Զիանետինօի կնոջ փոխարէն բանաստեղծը յօրինում է նրա քոլը Զուլիալի տիպը։ Պատմական դէպքի փոփոխութիւն է նոյնպէս Ֆիէսկօի մահուան արկածը. ըստ պատմական աւանդութեան՝ Ֆիէսկօն մութ ժամանակ, մի ցոկ նաւի վրայ անցնելիս, ոտքի տակի տախտակը շրջւում է և հերոսը ջուրն ընկնելով՝ զգեստի ծանրութիւնից տակն է անցնում և խեղդում հենց ալն միջոցին, երբ դաւադրութիւնն լազողուել էր։

Այս պատահական մահն այնքան էլ ողբերգական չգտնելով Շիլէրը սպանել է տալիս նրան Վէրիննալի ձեռքով. թունդ հասարակապետական Վէրիննան մասնակցել էր դաւադրութեանը, որպէս զի բռնաւոր դքսերի ոչնչացմամբ վերականգնէ հասարակապետութիւնը։ Ֆիէսկօն ձգտում էր իշխող բռնաւոր դքսին, Զիանետինօ Դօրիալին տապալել, որպէս զի ինքը դուքս ընտրուի, իսկ Վէրիննան բացալատ առաջարկում է նրան հրաժարուել իր մտադրութիւնից և վերականգնել հասարակապետութիւնը. երբ Ֆիէսկօն չէ լսում իւր բարեկամ և դաւակից Վէրիննալին, վերջինս ծովն է ձգում ամբոխի

Ճայնով արդէն ընտրուած գքսին և խեղդում։ Ահա ալսպիսի վերջ է ունենում այն ճարտարարուեստ և նենդաւոր քաղաքական տնձի յաջողութեամբ գլուխ բերած դաւադրութիւնը։

Նիկոսի դաւադրութիւնն արձակ է գրուած, արդպատճառով և Բարխուգարեանի ժարգմանութիւնը համեմատաբար տւելի լաւ տպաւորութիւն է թողնում ընթերցողի վերալ, թէև կան դարձեալ հայերէն պնճիշտ դարձուածքներ և բնագրի սիալ թարգմանած նախադասութիւններ. բաւականանք մի քանի օրինակներով։ Առաջին գործողութեան առաջին տեսարանում Լէօնօրան ի միջի այլոց ասում է. «Եթէ բնութիւնը ամէն քալլափոխում նորմն է լիշեցնում»։ Այս տողով ոչինչ չէ հասկացւում, բաց ենք անում բնագիրը և կարդում — «In anspräche in jeder Fusslärpfle der Natur» որ պարզ միտք է։ Նոյն գործողութեան երրորդ տեսարանի վերջը Կալկանիօն ի միջի այլոց ասում է. «...որով նա մարմնի կենդանութիւնը ազատում է ժահրալից ուռուցքներով անդամների վերար. անհասկանալի է. բնագրում պարզ ասուած է. «որ մարմնի սիրտը փրկում է անդամների պալարների միջոցով»։

Նոյն գործողութեան ասաներորդ տեսարանում Վէրիննան ասում է. «Բաւական չէր քեզ, որ այն անպիտանը լարձակուեցաւ օրէնքի սրբութեան մէջ — հարկաւոր էր, որ այն անպիտանը յարձակուէր և քո արիւնի սրբութեան մէջ»։ Բնագրում ասուած է. «ստահակը շաշափեց օրէնքի սրբութիւնը — այս մարտակոչը քեզ համար անզօր եղաւ — և սրիկան պէտք է շօշափէր նաև քո արիւնի սրբութիւնը»։

Երկրորդ գործողութեան առաջին տեսարանում Լէօնօրան շարունակում է. «իսկ այն բաց կարմիր էր և ալիաւոր»։ Ի՞նչ է նշանակում ալիաւոր. խօսքը ժապաւէնի մասին է. բնագրում գործ է ածուած ցըմլատուաբառը, որ մետաքսէ ժապաւէնի ոլոր-մոլոր շերտերն է արտայալատում։

Չորրորդ գործողութեան տասնուշը սերորդ տեսարանում ֆիկսկոն ասում է Լէօնօրալին. «Ես երբեմն տեսնում էի ձեզ մի Ձէնօվացի կնոջ ձախ կողմ

կանգնած—տեսնում էի, ինչպէս գուք ազնուականների ժողովներում պէտք է բաւականանալիք ասպետների երկրորդ ձեռի համբուրով—Լէօնօրա այդ բանը ցաւցնում էր իմ աչքերը։ Արդեօք ընթերցողն ինչ հասկացաւ, երկրորդ ձեռի համբուրը որն է։ այն ինչ հեղինակի ասածը պարզ ու հասկանալի է՝ հպարտ ֆիէսկօ կոմսը չէ կամենում, որ իւր կինը ուրիշների շարքում եր կը որդ տեղը բռնի, ուրիշ կանանց հետ մանգալիս ձախ կողմից գնալ և ասպետներս առաջ ուրիշի ձեռքը համբուրեն, ապա թէ նրանը—կարճ ասենք, ֆիէսկն ցանկանում է, որ իր կինն առաջին տեղը բռնի, դքսուհի լինի։

«Վանեցու երգի» մասին նոյնը կարելի է ասել, ինչ որ մի փոքր առաջ ասացինք «Դարօւն Հայաստանի» բանաստեղծութեան մասին։

«Վանալ գեղեցիկ լմի ափերին  
Խաղաղ ծաղկում էր մեր շէնն ու տունը։  
Հալի քրտնքով ջրած տափերին  
Սրկնքից պակաս չէր օրհնութիւնը։  
Յանկարծ Քրդերի կատաղի խմբեր  
Յարձակուեցան մեր տների վերաւ,  
Սրի անցկացրին թէ մտնուկ, թէ ծեր.  
Իմ հօրն ու մօրն էլ սպանեցին անխնակ,  
Ես վիրաւորուած մասցի ընկած,  
Եւ թոթովում էր լեզուս պապակած。  
Լուս հաւատովս երդվում եմ ես,  
Կը գալ օրը,  
Այս բոլորը  
Կը վճարէ իմ սուրը ձեզ։

1881 թ. V և VI միացեալ համարներով Փորձը վերջ դրեց իւր չորս և կէս տարուալ բեղմնաւոր գոյութեանը՝ նիւթական միջացների պակասութեան պատճառով։ «Փորձի» խմբագիր Հրատարակիչը թէւ «Հիւսիսափալի» խմբագիր Հրատարակիչ Ստ. նազարեանի պէտքանակների քչութեան պատճառով չէ ապակում հայ անտարբեր հասարակութեանը, սակայն «1876-ից սկսած մինչև այսօր մենք մօտ տասն և չորս հազար ռուբլի վնաս ենք կը եւ ծանօթութեամբ նոյնանան բարոլական հարուած է տալիս ժայանակակից հայութեանը։ Ար. Ցովհաննիսեանի հրա-

ւէրը. «..թող մեր հասարակութեան յառաջադէմ ներկայացուցիչները գտնեն այն միջոցները, որոնցով հնարաւոր լինի շարունակել արս ամսագրի հրատարակութիւնը... տարաբաղդաբար մնաց ճաւին բարբառոյ յանապատիք և ոռոսահայոց միակ հայերէն ամսաթերթը — չհաշուած պաշտօնական «Արարատը» — դադարեց:

«Հիւսիսափայլի» դադարումը մենք բացատրեցինք այն հանգամանքով, որ այն ժամանակ հայ պարբերական մամուլը դեռ պահանջ չէր կարող լինել մեզ համար, սակայն նոյնը չենք կարող ասել «Փորձի» դադարման վերաբերմամբ, որովհետև ութսունական թուականներին մենք արդէն այնչափ քաղաքակրթութիւն ունեինք, որ մի հատիկ ամսագրի գոլութիւնը կարող էինք դիւրութեամբ պահպանել և պէտք է պահպանեինք, եթէ անտարբերութեան և օտարամոլութեան ոգին այնչափ կաշկանդած չլինէր մեր ուղեղները:

Փորձի վերջին համարում սկսուց տպագրուել Բարխուդարեանի «Բարեպաշտ մարդիկ» առակը, որ կիսատմնաց և ապա, 1889 թ., ամբողջը լոյս տեսաւ առանձին գրքովով:

Փորձ ամսագրի դադարելուց յետով թէև Բարխուդարեանը մեր պարբերական մամուլի ասպարէզից չէ հեռանում — տշխատակցում է «Երանգանքին», «Հանդէս գրականական և պատմական», «Լումար», «Թատրոն» ժողովածուներին, «Մուրճ» և «Լումար» հանդէսներին, — սակայն ոչ յաճախակի և այլ ևս մեծ տշխատութիւններ չէ տպագրում դրանց մէջ<sup>1)</sup>, բացի «Թատրոն»-ում տպուած և ապա առանձին լոյս տեսած «Մարիա Ստիւարտ» ից: Ուստի այլ ևս չենք որոնի ցրուած ալդ փոքրիկ հատուածները և կրաւականանք Բարխուդարեանի մնացած այն աշխատութիւնների ուսումնասիրութեամբ, որոնք լոյս են տեսել առանձին տպագրութեամբ: Իսկապէս ալդ ցրուած հատուածները — բանաստեղծութիւնները ի մի են հաւաքուած Բարխուդարեանի «Բա-

<sup>1)</sup> Արձագանքում Բարխուդարեանն սկսեց տպագրել իւր լիւողութիւնները Դօրպատի կեանքի մասին, սակայն թերի թողեց.

նաստեղ ծութիւնները ժողովածուի մէջ. ուրեմն շատ բան էլ չի մնալ մեր զննութիւնից դուրս:

1883 թ. յունիսին Թիֆլիզի թեմական-առաջնորդ սրբազն Սրբական եպիսկոպոսի առաջարկութեամբ հարխուդարեանը թողնում է թեմական տեսչի պաշտօնը, որովհետև մտադրութիւն կար ալդ պաշտօնը լանձնել հոգեորական անձի. սակայն կարճ ժամանակից յետով թեմական տեսուչ է նշանակում պ. Ղ. Աղայեանը. Նոյն թուին Բարխուդարեանը հրաւիրում է կրկին ներսիսեան դպրանոց՝ ուսւաց պատմութիւն ու աշխարհագրութիւն աւանդելու, իսկ արողկան առաջին գիմնազիայում ստանձնում է հայոց լեզուի դասերը: Հետեւեալ տարին ալդ պաշտօնների հետ ի միասին նա սկսում է վարել նաև Թիֆլիզի քաղաքալին տարրական դպրոցների տեսչի պաշտօնը:

## X

Ուսուցական զբաղմունքի միջոցին ևս մեր բանստեղծը չէ մոռանում իւր սիրելի Շիլէրին և 1884 թ. առանձին գրքոյկով հրատարակում է «Զանգակի երդի» թարգմանութիւնը:

«Զանգակի երդը» Շիլէրի այն գրուածքներից մէկն է, որոնցով արտայալուել է բանաստեղծի հանճարը և նրա մտքի ծովածաւալ ընդարձակութիւնը. այս երգի մէջ նկարագրութիւններն այնպիսի վառ գոլներ են կրում, կարճ և ազգու գծերով այնպիսի ամբողջացած պատկերներ են նկարուամ, որ մարդ սքանչանում է կարդալով: Մարդկալին և հասարակական կեանքի համարեալ բոլոր էական դիպուածները և դրանցից առաջացած զգացմունքները բանաստեղծը հիանալի կերպով կապակցում է զանգակի հնչիւնների հետ: Դժուար թէ գտնուի մի ուրիշ բանաստեղծութիւն, որ ալդչափ փոքրիկ ծաւալով այնքան ընդարձակ մտքի շրջան բանալ, այնքան մարդկալին խորին զգացմունքներ թափանցէ և սիրուն քնարերգութեամբ կեանքի ամենանշանաւոր շըրջանները պատկերացնէ: Այս հիանալի նկարագրութիւնը քայլ առ քայլ զուգընթացաբար առաջ է գնում զանգակ շինելու գործողութեան հետ և ալդ շաղկապումն աւելի ու աւելի է զօրեղացնում տպաւորութիւնը:

Բարխուդարեանը ճաշակով ընտրել է Շելլէրի ամենալաւ ստեղծագործութիւնները և հայ գրականութեան նուիրել. Զանգակի Երգն այնքան գեղեցիկ գործ է, որ մենք չենք ձանձրանալ՝ հայերէն թարգմանութիւնն ամբողջովին (գրքուկով 29 էջ) համեմատելու բնագըլ հետ: Սկիզբը լաջող է.

«Կաւից թրծած ձուլն ամրափակ  
Գետնի ծոցումն է դրուած.

Ալոր պիտի ձուլենք զանգակ,  
Տղերք, միր եղէք, աչքաբաց»:

Հետեւեալ էջում կարդում ենք.

«Նիմա բերէք մալրի փալու շատ,

Բալց տեսէք, լաւ չոր լինի,

Որ նրա բոցը հեշտ ու աղատ

Բորբոքուի ու մէջն անցնի».

Վերջին երկու տողերը ճիշտ չեն. Բնչ է նշանակում «բորբոքուի ու մէջն անցնի»: Բնագըլում ասուած է.

«Das die eingepresste flamme  
Schlage zu dem Schwelch hinein»

«Որ ճնշուած բոցը դէպի բոցանցքը խփի».

«Որ զանգակի թանձր ապուր  
Կակ զի, հոսի օրինաւոր».

Բնագըլում ասուած է. «որ զանգակի զտած պղինձը, հոսէ օրինաւոր կերպով»: գերմաներէն «Glockenspeise» բառը նշանակում է զանգակ ձուլելու պղինձ, Բարխուդարեանը բառացի թարգմանել է «զանգակի ապուր»—Spreise նշանակում է կերպակուր: «Սպիտակ փրփուր է բարձրանում»

Բնագըլում փրփուր չէ, ալլ պղպջակ, փամփուշտ — Weisse Blasen — տեղ տեղ Բարխուդարեանը ընդարձակում է բնագիրը և երկու տողից չորս տող է կազմում:

«Das schönste sucht er auf den Fleurn,  
Womit er seine Liebe schmückt».

Ընդարձակուել է լաջող կերպով այսպէս.

«Ամենաչքնաղ գոլն գոյն ծաղիկներ

Ժողովում է նա կանաչ դաշտերում,

Նոցանից հիւսում սիրուն պսակներ

Եւ սիրականի գլուխը զարդարում»:

Թարգ. «Փողերն արդէն թխացան, տես,  
թաթախում եմ գաւաղան»

Բնագրի մէջ ոչ փողի (երաժշտական գործիք)  
մասին խօսք կալ և ոչ էլ գաւաղանի, այլ խողովա-  
կի և փալտի ձողի:

«Արդեօք կարծրն ու կակուզը սերտ  
Զուգաւորհւել են իրար հետա»:

Զուգաւորուել բառը որոշ նշանակութիւն ունի և  
զործ է ածւում միալն շնչաւորների վերաբերմամբ.  
«Vereint» գերմ. բառն ալստեղ նշանակում է միա-  
խառնուել, միանալ:

«Ա՛խ, ալդ կեանքի չքնաղ տօնով  
Վերջանում է կեանքի դարուն,  
Եւ զօտու հետ և քողի հետ  
Վերանում է ցնորքը սիրուն»:

Այս տողերից ոչինչ չէ հասկացւում, այն ինչ բնա-  
գերը սիրուն ձեռով հետևեալ խոր միտքն է արտայա-  
տում. «Ա՛խ, կեսնքի ամենազեղեցիկ տօնախմբութիւ-  
նը (խօսքը պատկի մասին է) վերջ է զնում և կեանքի  
դարնանը. (հարսնեկան) գոտու և քողի պատառուելով՝  
մեր գեղեցիկ ցնորքն էլ ցնդում է»:

Թարգ. «Եւ հալրը բարձր տան պատշգամբից  
Նալելով իր շուրջ ուրախ հալեացքով,  
Դիտում է իւր բաղդը մի անգամից.  
Տեսնում է ցանկը բարձր սիւներով».

Բնագ. «Եւ հալրը գուարթ նալուածքով, տան հե-  
ռուն տեսնող կտուրից կըկին թւում է իւր, ծաղկած  
վիճակում գտնուող, բաղդաւորութիւնը. տեսնում է  
դռան մարդակներից աւելի բարձրացած ծառերը»....

«Schön gezacket ist der Bruch»

Թարգմ. Մետալը լաւ է հալուած».

«Rauchend in des Henkels Rogen

Schiessst's mit feuerbraunen Wogen».

Թարգ. «Ահա հրանիւթը սան ձարձակ  
Խողովակով վազեց արտգու».

Այս վերջին երկու հատուածները վերաբերում են  
զանգակ շինելու գործողութեանը և ալդ արուեստին  
վերաբերեալ մտքեր են պարունակում. այս հատուած-  
ները ճշտութեամբ թարգմանելու համար պէտք է ու-

սումնասիրել զանգակ ձուլելու եղանակը. իսկապէս Բարխուդարեանն այդ տողերը չէ թարգմանել, ալլ իրենից շարադրել է անհամապատասխան տողեր:

«Hört die vesper schlagen», նշանակում է ըսում է երեկոյեան ժամի զանգը. Բարխուդարեանը թարգ.

«Եւ տուն է գնաւմ»:

Թարգ. «Քաղաքացուն զարդ և աղբիւր  
Արդիւնքի է աշխատանքը».

Բնագ. «Աշխատանքն է քաղաքացու զարդարանքը, օրհնութիւնն է վաստակի հատուցումը»: Ոչ բառացի, բայց յաջող փոխադրուած է հետևեալ հատուածը».

«Խաղաղութիւն անձկալի,  
Սերտ միութիւն ցանկալի,  
Պահեցէք ձեր թեփ տակ  
Այս քաղաքը անվտանգ»:

Թարգ. «Եւ հարկաւոր չէ նա մեզ».

Բնագ. «Իւր դիտաւորութիւնն իրագործեց կամ իւր նպատակին ծառալեց»:

Թարգ. «Որ զուարճանան սիրտն ու աչքը  
Պատկերով գեղեցկատեա».

Բնագ. «Լաւ յաջողուած պատկերով»:

Թարգ. «Մուրճով տներ, համ, տներ,  
Արմ ջարդ ու փշուրո»:

Սակայն ինչը պէտք է ջարդ ու փշուր անել թարգմանիչը բաց է թողել բնագրի Mantel բառը, որ սովորական մտքով նշանակում է թիկնոց, ծածկոց. իսկ զանգակը զինելու արհեստում և մանտէլը է կոչում կաղապարի կամ ձոյլի երրորդ շերտը, որ պէտք է փշրել, զանգակը երեւան գալու համար:

«Բայց վմէ է, երբոր բորբոքուած հանքը».

Ալստեղ հանքի մասին խօսք չի կարող լինել. գերմ. Ergz բառը նշանակում է նաև անագապղին ձալի իմաստով և գործ է ածուած:

Թարգ. «Պատռում է տունը, դարձնում աւերակո»:

Այս տողով ճիշտ պատկեր չենք ստանում, որովհետև խօսքը անլաջող գուրս եկած ձոյլի մասին է. բնագրում ասուած է. «պալթեցնում է ճեղքուած տունը»:

Թարգ. «Եւ հնազանդում չէ ոչ ոքին».

Բնագ. «Եւ զարհուրելի կերպով ինքնօգնութեան է դիմում»:

Թարգ. «Կաղապարից կոկ և փալլուն  
Նընեցաւ զուտ մէտալ»:

Բնագրում սիրուն պատկերացումն կայ, որով զանգակը և իւր ձոլլը նմանեցնում է փոճոկի (կամ կճպի) և կորիզի (կամ միջուկի) հետ. «Փոճոկի միջից փալլուն և կոկ կճպւում է մետաղեալ կորիզը, միջուկը»:

Առաջ ենք բերում հրդեհի գեղեցիկ պատկերացումը, որ Իարխուրարեանի համեմատաբար լաջող թարգմանած հատուածներից մէկն է.

«Երկինքը, տես,

Արիւնի պէս

Կարմրել է.

Արդ կարմիր լուս

Չէ արշալուս,

Ի՞նչ աղմուկ է

Փողոցներում.

Ամպի նուան

Ծուխ բարձրանում.

Հրեղէն սիւներ են վեր ցցվում,

Փողոցն ամբողջ բոցով լցվում.

Կրակը հողմից շուրջ տարածվում,

Օդը եռում ու բորբաժվում,

Ինչպէս հնոցի հրացէկ ծոցում,

Ճալթում են գերանները,

Կործանվում են դռները,

Լուսամուտներն են ջարդ ու փշուր,

Երեխանները խառն ի խուռ.

Ողբում, կանչում են լալագին.

Թշուառ մալրը լուսակտուր

Որոնում է իւր զաւակին.

Փլատակների տակը սաստիկ

Մոնչում, ոռնում են կենդանիք.

Վազվզում են շտապով մարդիկ,

Փախչում, փրկում կահ կարասիք.

Լուսաւորուեց գիշերը սկ

Կարծես ցերեկ է և արև...»:

Արժէր, որ «Զանգակի երգը» թարգմանիչը արբագրելով և ուղղելով նորից հրատարակէր:

## XI.

1889թ. Բարիսուգարեանը հրատարակում է «Բարեպաշտ մարդիկը»—առակ չափահասների համար,—որի սկիզբը ինչպէս տեսանք, տպուած է Փոքրձի վերջին համարում։ Այս ընդարձակ ոտանաւորի—բաղկացած է 158 էջից—բուն նիւթն ինքն ըստ ինքեան մի սովորական պատմութիւն է։ Աստղիկը սիրում է Վահանին, բայց հօր խօսքը կատարելու և հարուստ լինելու ձգտումով՝ տմուսնանում է մեծատուն վաճառական Եսալու հետ, սակայն շարունակում է սիրալին լարաբերութիւն ունենալ Վահանի հետ։ Աստղիկն իրեն բարեպաշտ և երկիւղած ցոյց տալով արտաքուստ, ամեն երեկոյ առանձնանում է մի սենեակում՝ աղօթելու պատրուակով և հենց այդտեղ տեսակցութիւն է ունենում Վահանի հետ։ Դրացուց նախազգուշացրած Եսալին մի գիշեր ստուգում է իրողութիւնը և երբ ֆալտը ձեռին Վահանի լետելից փողոց է վազում՝ նրան հարուածելու, ըռնւռում է ոստիկաններից։ ալդ գիշեր գողերը գանձարանը լափշտակել և փախել էին, ոստիկաններն Եսալուն գողի տեղ ընդունելով՝ բանտարկում և թագաւորին են ներկայացնում։ Եսալին տեսնելով՝ որ ազատուելու հնար չկալ, գող է ձևանում և թագաւորից իրաւունք խնդրում, որ մէւս օրը, կիրակի, իրան տանեն եկեղեցի, որպէս զի պատարագի միջոցին մատնէ իւր ընկեր գողերին։ Ալդպէս էլ լինում է։ ծպտեալ ոստիկաններով շրջապատուած՝ Եսալին եկեղեցում նալում է իւր շուրջը և ում որ տեսնում է ջերմ աղօթելիս, կամ բազկատարած և ծնկաչոք մեղալ ասելիս, նրանցն է իրեւ գող մատնացոյց անում։ Ալդ կերպ բանտարկում են վեց գող բարեպաշտներ, որոնք թագաւորի մօտ խոստովանում են, որ իսկապէս իրենք են գանձարանը լափշտակողները, բայց զարմանալով մերժում են Եսալու իրենց ընկեր լինելը։ Հանգոյցը լուծում է Եսալին։

«...ինձ համողեց կնոջս վարքը,  
Որ ստով լիքն է աշխարհքը.  
Եւ որ նոքա, որոնք իրանց

Յոց են տալիս սուրբ, բարեպաշտ,  
Հենց նոքա են օրինաղանց,  
Արդարութեան ոսխ անհաշտու:

Հենց ալդ տողերով էլ բացատրում է ամբողջ գը-  
րուածքի անունը և նպատակը: «Ի արեպաշտ մար-  
դիկը եթէ միալն ալդ վիպական նիւթով սահմանա-  
փակուէք, շատ չէր տարբերուի հեղինակի «Մարդ և  
հուշակից և ոչինչ արժէք չէր ունենալ. սակալն  
գըրուածքի արժէքը և շահեկանութիւնը ալդ վիպական  
նիւթից գուրս, ներկայացնում են այն միջանկեալ հա-  
տուածները, որ բանաստեղծը կապով, երբեմն էլ ան-  
կապ, զետեղել է վէպի մէջ: Ահա այդ միջանկեալ  
հատուածների մէջ հեղինակը երգիծաբանորէն խօսում  
է օրուայ շար ու բարիի, հասարակական կետնքի զա-  
նազան երևոյթների մասին, որոնք երբեմն պարզ բնո-  
րոշում են Բարիխուղարեանի հայեացքները և երբեմն  
էլ կենսագրական տեղեկութիւններ տալիս նրա մասին:

Հնի և նորի մատին հեղինակն այսպէս է դատում.

Հաւատացէք, որ ես հնին  
Զատաղով չեմ ամենեին,  
Եւ անպատման էլ չեմ կարող  
Նորին լինել պախարակող:  
Վնչպէս հինը, նորնպէս նորը  
Լաւ, վաս կողմեր ունեն անթիւ...».

Հետեալ միջանկեալ հատուածում նկարագրում է  
անշնորհք գրողի դրութիւնը.

«Ակղբում խօսքս թեթե սահում,  
Կատարելով լաւ ել և էջ,  
Եւ խրախուսուած լաջող սկզբից,  
Միսիթարում եմ ինքս ինձ,  
Թէ կը գրեմ անպիսի բան,  
Որ ամենքը կը հիանան:  
Բայց զեմ մէջ տեղը չհասած,  
Յանկարծ ցրվում են մտքերա,  
Եւ լուսահատ տեղս նստած  
Կրծում եմ միալն եղունգներս:  
Գրում, չնշում, նորից սկսում...»:

Մի ժամանակ մեզանում «մօդա» դարձած աղա-  
տամիտ գաղափարի մասին.

«Դա ծնունդ է մեր ժամանակի,

Սիրած բառ ոմեն մի համբակի...  
 Մէկը հերքում է ամեն բան,  
 ինչ որ դարերով սրբուած է,  
 Հալի՛որում է սորան, նորան,  
 Թէև ինքը մրուած է...  
 Ծով և լանդուգն աշակերտը...  
 Գրչալաճառ լրադրապետը...  
 . . . . . եւ աղատամիտ»:

**Մեր հասարակութեան անընթերցասիրութիւնը  
նոյնպէս մտրակուում է.**

«Հալ ազգը չէ ընթերցասէր,  
 Կարծես իղուր բազմավաստակ  
 Սուրբ Մեսրովը հնարեց տառեր.  
 Գուաչներէրդի զիւտից անմահ  
 Հալերը չեն քաշում շատ շահ».

**Երգիծաբանութեան է ենթարկուում նաև այն հան-  
գամանքը, որ այն ժամանակ մեր լրագիրները շաբաթը  
մի քանի անգամ հրատարակուելով՝ «ամենօրեաը  
էին կոչւում.**

«Մենք լրադիրներ ունինք նոյնպէս,  
 Ամենօրեալ մինչեւ անգամ,  
 Բայց դալիս են նոքա հանդէս  
 Մի եօթնեկուում երեք անգամ...».

**Մեր հասարակութեան կրթուած համարուած դա-  
տակարգի մասին.**

«Լուսաւորեալ կոչուած դասը  
 Հալերէն չէ կարդում երբէք...:  
 Որո՞ք, ստիպուած լոկ պատշաճից,  
 Երբեմն առնուում են հալ գրքեր,  
 Կամ ի պատիւ բարեկամին  
 Բաժանորդ են մի օրագրին,  
 Սակայն, գիտեմ, որ չեն կարդում,  
 Թերթերն անգամ չեն կտրատում...».

**Եատ թունդ երգիծաբանութեան առարկալ են  
գառնում հալ խմբագիրները.**

«Փոքր մնաց մոռանալի  
 Մեր խմբագիր պարոններին—...  
 Ո՛հ, նոքա շատ ինքնասէր են,  
 Որովհետեւ գրչի տէր են,  
 Թէ իմացար դու գրաւել  
 Նոցա սէրն ու համակրանքը,  
 Որ շատ հեշտ է, ևս առաւել,

Երբոր նոցա փուտ ապրանքը—  
Լրագիրը, զովես, ճարես  
Բաժանորդներ քանի մի հատ,  
Թէկ ողջ թերթը քրքրես,  
Առողջ մտքեր չես գտնի շատ—»»»

**Հեղինակի սուր դիտողութիւնից չեն ազատւում**  
նաև մեր քնն ադատն ելը՝  
«Ո՛հ, զգուշ կացէք, հեղինակներ,  
Նոցա հետ մի անէք կատակ!»  
Արամաղդի պէս կալծակներ  
Կարձակեն, թէ առիթ կըտաք.  
Բարկացկոտ են նոքս սաստիկ,  
Մի գնաք նոցա դուք հակառակ,  
Չեն ճանաչում մեծ ու պստիկ,  
Խսկոյն կանեն ձեզ խալտառակո։

Բանաժամանակակից ծաղրում է «աղա» և «պարոն» տիտ-

ղուները.

«...իւրաքանչիւր հալն է աղա.  
Աղա Պետրոս, Վարդան աղա,  
Միաւն թէ աղա է նոցանից  
Մէկն առաջից, միւսն ետեից:  
Բոլոր հաւերն են պարոններ,  
Նոյն է ասել թէ Վարոններ»։

Նոյն ոճով երգիծարանում է ամուսնացողների մեղ-  
րամիսը, իւր ամուրի մնալը, թիֆլիզիների քէֆնը  
մուշտալիդի ալգիներում, կանսաց «ոուրնիւրան, դէ-  
կօլտէն, վատ վարքը և ալլն»։

Առակն ունի նաև մի վերջաշան, ուր սուր եր-  
գիծանքի է ենթարկում մեր լայտնի գրողներից մէկը.  
ալս առաջին անգամն ենք պատահում Բարխուդարեա.  
Նի բոլոր գրուածքների մէջ անձնական լարձակումի.  
առվարաբար նո իրեն միշտ բարձր է պսհել։ Ահա ալդ-  
հատուածը։

«Ես երգում եմ, իբրև գուսան,  
Ինչոր ազդում է ինձ մուսան։  
Դորա համար գուցէ երգս  
Հնչում իբրև պարկապզուկ  
Մի աղալին, սրին երկս  
Հաճելի չէ, որին թզուկ  
Երեսում են բոլոր մարդիկ։  
Միաւն ինքն է մեծ, ինքն է հանճար.  
Նրան համոզել զուր կաշսատիք»։

Թէ նա մեծ չէ, ալլ միակն երկար....

Ինչպէս արդէն նկատեցինք, «Բարեւ պաշտ մարդկէր» հետաքրքրական է այն տեսակէտից, որ իւր մէջ ամփոփում է համարեա կէս դար գործող մեր բանաստեղծ թարգմանչի հալեացքները՝ մեր կեանքի երևոյթների և հասարակական մի քանի խնդիրների վերաբերութեամբ։ Առակը կարդացւում է դիւրութեամբ, չնայելով որ շատ հատուածներ միմեանց հետ առանձին կապ չունին և մի մի ամբողջութիւն են ներկալացնում։ այդ հանգամանքն երևի առաջանում է այն բանից, որ գրարեպաշտ մարդիկը» երկար ժամանակի ընթացքումն է գրուած ընդմիջումներով։ Ինքը բանաստեղծն էլ մի տեղ ակնարկում է այդ։

Աչ չեմ ձգտում ականաւոր  
Երգիշների հասնել փառքին,  
Օդնիքը գոնէ արժանաւոր  
Կերպով վերջ տամ իմ առակին,  
Որի վերալ, ոչ միշտ արի,  
Աշխատել եմ քանի տարի։

1894 թ. լոյս է տեսնում Բարիխուդարեանի մի նոր թարգմանութիւնը, որ նախապէս տպագրուել էր «Բարեւ ոն» ժողովածուի մէջ։ մեր բանաստեղծը չէր մոռացել զեռ իւր սիրելի Շիլէրին և այս անգամ հայացրել էր նրա՝ պատմական կեանքից առնուած ողբերգութիւնը—«Մարիա Ստիւարտը»։

Ինչպէս երևում է Շիլէրի Գէօթէին գրուած նամակներից, Մարիա Ստիւարտը նա սկսել է 1793 թ. ապրիլին, իսկ առաջին ներկալացնումը տեղի է ունեցել 1800 թ. լունիսին։ Այդ ներկալացման առթիւ Գէօթէն գրում է Շիլէրին։ «Ամենքը գոհ մնացին։ այդ թատերգութիւնն արտաքոլ կարգի ուրախութիւն պատճառեց ինձ։»

«Մարիա Ստիւարտի» մէջ առաջին դերերը խաղում են Անդլիալի թագուհի Եղիսարէթը և Շօտլանդիալի թագուհի Մարիամը-Մարիա Ստիւարտը—Շիլէրն այս երկու կանացի տիպերի մէջ միացրել է կանացիութիւնն ու արքալական հզօր բազուկը, կանացի թոլլ սիրտն ու պետութեան բարձրագոյն դեկը։ Այս

երկու պատմական թագուհիներն էլ բնութեան և հոն-  
դամանքների հպարտ և զարմանալի հոգիներն էին.  
երկուսն էլ մտաւոր բարձր զարգացման տէր անձինք.  
թէ Մարիամը և թէ Եղիսաբէթը նոյն իսկ բանաստեղ-  
ծութիւններ էին գրում. առաջինն աւելի բանաստեղծու-  
կան ձիրք ունէր, իսկ երկորդը գիտնական ոճ, որ  
ձեռք էր բերել դասական գրուածքների ուսումնասի-  
րութեամբ. Չնայելով, որ Մարիամը կենսուրախ, զգաց-  
մունքներ ներշնչող ու տենչասէր բնաւորութիւն ունէր,  
այնուամենալին ամբողջովին նուիրուած էր պետական  
գործերին, Երկու թագուհիներն էլ միահաւասար ե-  
ռանդով էին աշխատում պետական գաղտնի խորհուրդ-  
ներում, բայց վերջնտկան վճիռը միշտ իրենք էին ա-  
լիս. Եղիսաբէթն աւելի լսում էր փորձուած և իմաս-  
տուն խորհրդականներին, իսկ Մարիամը խորհրդատու-  
էր ընտրում իւր տնձնական սիրելիներին. Եղիսաբէթը  
հետեւում էր իրերի բնական ընթացքին, Մարիամն ա-  
ւելի անհանգիստ և ձեռնարկող հոգի ունէր: Երկուսն  
էլ պատերազմի դաշտը դուրս գալով անձամբ խրախու-  
սել են զօրքը կրուի միջոցին:

Բօթվէլը, որ Շօտլանդիալի մագնատների մէջ լալտ.  
նի էր իւր ալրական գեղեցկութեամբ ու քաջութեամբ  
և՝ Մարիամ թագուհու սիրելին էր, վերին աստիճանի  
փառասէր մարդ լինելով, կամենում էր երկրի բարձ-  
րագոյն իշխանութիւնն իւր ձեռքն առնել: Այդ նպա-  
տակին հասնելու համար նա, թագուհու գործակցու-  
թեամբ—թէև այս հանգամանքը պատմաբանօրէն ստու-  
գուած չէ, այլ աւելի աւանդական զրոյց է—դաւա-  
դրութիւն է կազմում թագաւոր Դարնէլի գէմ ու նրա  
բնակարանի տակը վառօղ լցնել տալով՝ օդը թնդեցնում.  
Թագաւորը նախապէս քնից զարթելով ուզում է փախ-  
չել, սակայն իեղամահ է լինում: Բայց աւելի սար-  
սափելին այն էր, որ Մարիամ թագուհին ամուսնացաւ  
թագաւորի սպանման գործում մեղադրուող Բօթվէլի  
հետ: Հետեւանքն եղաւ 1567 թ. ալստամբութիւնը, որ  
ցաւալի վախճան ունեցաւ թագուհու համար. նա ստի-  
պուեց թողնել Շօտլանդիան և Անգլիա փախչել՝ պաշ-

պանութիւն գտնելու Եղիսաբէթ թագուհուց, սակայն բանտարկուեց այնտեղ:

Այնուհետև կաթոլիկ եկեղեցին ամեն միջոց գործ դրեց Մարիամին գերութիւնից ազատելու և նոյնիսկ դաւադրութիւններ սարքել տուեց Եղիսաբէթի դէմ, սակայն ոչ մէկը չլաջորդուեց և Մարիա Ստիւարտը մահուան դատապարտուեց՝ իբրև դաւադրութեանը մասնակցող. այդ եղեռնական վճիռն իրագործուեց 1587 թ. փետրուարի 8-ին<sup>1)</sup>:

Ահա այսպիսի ինքն ըստ ինքեան ողբերգութական պատմական նիւթից օգտուելով՝ ստեղծագործեց Շիլլէրը «Մարիա Ստիւարտը», ուր ազատ, բանաստեղծական երևակալութիւնը շաղկապուելով պատմական անձանց հոգեբանութեան հետ՝ արուեստով գեղեցիկ մի ամբողջացած միութիւն կազմուեց:

Բարխութարեանի թարգմանութիւնն անյանգ տառվանկանի տողովէ. տեղտեղ միայն յանգովէ կազմուած ոտանաւորը. նոյնանման յանգեր գտնելու ստիպողականութիւնից ազատ լինելով թարգմանիչն աւելի յաջողէ հայացը և Մարիա Ստիւարտը, սակայն դարձեալ բոլորովին անթերի չէ մնացել գործը. այստեղ ևս հանդիպում ենք այսպիսի դարձուածքների.

«Անազրութիւններ են նամակների,  
Գրուած Անգլիաի թագուհու վերաբ».

«Բրիտանիալի

Վեհապետաներին պէտք է վախենալ  
Միայն իրանց խղճից և պարլամենտից».

«Պէտք էր ինձ ձեզ լանդիմանել».

Ի՞նչ է նշանակում.

«Ալժմ զիտեմ, որ

Զերի իրաւունքը Անգլիակի վրաէ  
Է ձեր լանցանքը».

«Մի տաք ինձ կարծելու».

«Ինձ շատ զգուշ պէտք է լինել».

Մարիա. «—Սրտանց օրհնում եմ

<sup>1)</sup> Այս երկու թագուհիների արկածալի պատմութիւնը շատ հետաքրքրական կերպովէ ներկալացնում նշանաւոր պատմագէտ Լ. Ռանքէն՝ իր անգլիական պատմութեան Ի հատորում:

Բարեպաշտ արքակ իմ աներոջը:

Մարիամն իբրև կին՝ աներ չի կարող ունենալ։  
«Schwager» նշանակում է այստեղ քեռաւլը։

## XII

1897 թ. Բարիսուդարեանն երբ արդէն իւր կեանքի վաթսունուերկու գարունն էր տեսել, ի մի հաւաքեց իւր՝ մօտ քառասնամեալ շրջանում արտարտուած, սրտի զեղմունքը՝ վիշտն ու ուրախութիւնը, պատանեկական վառ սիրոյ բորբոքը և այրական քաջառողջ մտքի սառն փիլիսոփայութիւնը—և հրատարակեց «Բանաստեղծութիւնները»։

«Բանաստեղծութիւնները» ժողովածուի մէջ լրս են տեսել մեր բանաստեղծի այն բոլոր չափաբերական գրուածքները՝ թէ ինքնուրոյն և թէ թարգմանական, որոնք ցրուած տպագրուած էին գանազան համամագրերի և հանդէսների մէջ և որոնց կրկին հրատարակութիւնը հնարաւոր էր։

Ժողովածուի բովանդակութիւնը կազմում են լիսուն ու երեք ինքնուրոյն և քառասուն ու չորս թարգմանական ոտանաւորներ. այս թուերից արդէն պարզ երեսում է, որ Բարիսուդարեանն իբրև զուտ բանաստեղծ շատ բան չէ արտադրել և այս ասալարիզում նրա գրիչն այնքան էլ արդիւնաւոր չէ եղել. ինքնուրոյն բանաստեղծութիւններից մի մասը քնարերգական (լիրիկական) են — «իմ սիրածին», «իմ սիրածին», «սէր ու երգ», «աիրունին», «հրաւէր սիրոյ», «վերջին համբոյր» և այլն — մի մասը հալրենասիրական միտումով (տէնդէնցիալով) — «Հայաստանին», «Զորս հսկար», «Վանեցու երգ», «Մատծութիւններ», «Հայաստանին» և ալլն —, մի մասն էլ ձօն և դամբանական — «Փր. Բօդէնշտէդտին», «Նորդարի տասնամեակին», «Ամբատ Շահազիդեանին», «Հայոց Հալրիկին», «Հայր Ղևոնդ Ալիշան», «Ներսէս հինգերորդ», «Մ. պատկանեանի լիշտակին» «Մ. Ն...ցի լիշտակին» և ալլն։

Իբրև քնարերգակ բան աստեղծ՝ Բարիսուդարեանը շատ փոքր տեղ կը ոնէ մեր գրականութեան

մէջ. նրա քնարի հնչիւնները շատ թոյլ և երգի ելեւ-  
էջը շատ միօրինակ է: Բնութիւնը չէ շնորհել նրան  
երևակայական թռիչքի համար ընդարձակ սահմաններ.  
նա զգալուն սիրտ ունի, որ պատրաստ է սիրով բորբո-  
քուելու և վշտով համակուելու, սակայն այն երկնալին  
կալծը, որ ինքնարեղ բանաստեղծների հոգեկան աշխարհում,  
կարծես թէ միմիարն առկայծում է բարխուգարեանի  
սրտում: Նրա բանաստեղծութիւնների մէջ ամենից  
թոյլերը սիրալիններն են. համբոյլով ու արցուն-  
քով լիքն են ալդ ոտանաւորները, բայց ջերմութիւն  
չկատ գրանց մէջ, սառն են, չեն բորբոքում ընթերցո-  
վի երևակայութիւնը, ալդ պատճառով և տպաւորու-  
թիւն չեն թողնում: Վերցնենք օրինակ գրքի հենց ա-  
ռաջին ոտանաւորները. ամենից առաջ է գրուած գեղե-  
ցիկ «կապոյտ երկնքումը», որի մասին արդէն խօսել  
ենք:

## ԻՄ ՍԻՐԱԾԻՆ

«Ո՞չ, ինչ քաղցրութիւն, ինչ երջանկութիւն  
կը պարզեւէիր, հրեշտակ իմ, դու ինձ,  
նթէ որ սիրով խօսառվանութիւն  
կաէի մի օր քո շրթունքներից:

Ապա ես ինձ ստոր չէի համարի  
Օլիմպեան անմահ ընակիչներից.  
Զի՞ որ ես ինքս էլ կանմահանալի,  
Ծծելով նեքտար քո շրթունքներից».

## ԴԱՐՁԵԱԼ ՆՈՐԱՆ

Սիրելի, խղճակ դու ինձ,  
Ո՞չ, մի առնջիր ինձ պասպէս,  
Անտանելի կասկածից  
ինչ կը լի սիրոս ազատես...

Բաւ է, վերջ տուր կասկածիս,  
Ասմ, որ ինձ սիրում ես,  
Գրկիր, պաչիր երեսիս,  
Թող քոնն էլ համբաւը եմ ես....».

## ԻՄ ԿՈՒՌՔԻՆ

«Դու իմ կուռքն ես, իմ զիցուհին, հրաշալի կին,  
Ես քո պաշտոնը ջերմուանդ և կաթողին.  
Ես էլ, ահմ, քո առաջը խոնարհելով,

Նրկրպագում եմ, ոտներդ համբուրելով...»:

### ԴԱՒԱՀԱՆՈՒԹԻՒՆ

«Յատ երզումներ, քիւր համբուրներ  
Տուել էր ինձ սիրականս.  
Ո՞վ կը կարծէր, թէ արսպէս վատ  
Երբէք պիտի զնալ բանս...  
Բայց բնչ.—Երէկ երեկողեան  
Գնացի մօտը սիրոս լուսով լի,  
Երբ ուզեցի որ համբուրեմ.  
«Ա՚խ, չչո, ասաց, «չէ կարելի»...»:

### ՀԱՄԱՍՓԻՒՐ

«...Ե՛կ, իմ սիրական, Եկ, իմ աչքի լուս,  
Հասիր օգնութիւն տառապեալ հոգուս,  
Բայց, միս, հեռու ես դու ալժմ ինձանից  
Եւ չես կարող գալ միիթարել ինձ...»:

### ՎԵՐՁԻՆ ՀԱՄԲՈՅԻՐ

«Մնաս բարով, իմ թանկագին Մարիամ,  
Աւաղ, հասաւ մեղ բաժանող դառն ժամ,  
Վերջին անդամ, Եկ, համբուրեմ երեսդ,  
Վերջին անդամ գուցէ թէ եմ ես հետդ...»:

### ԶՈՐԵՂ ՃԱՐ

«...Երբ սիրուհիս է իմ գրկին,  
Եւ դրօշմում եմ համբուրներ  
Վարդակարմիր նրա շրթունքին  
Եւ վալելում քնքոյշ սէր...»:

Ինչպէս տեսնում է ընթերցողը, Բարիսուդարեանի  
քնարն առանց համբոյի չէ ուզում հնչեցնել լարերը,  
բայց միևնուն ժամանակ գրաւուելով այդ քնքոյշ հա-  
ճուքով՝ հնչիւնները ցրում են և ցանկալի ներդաշ-  
նակութիւն չեն առաջացնում:

Ին քնուրոյն բանաստեղծութիւններից  
յաջողուածները և տպաւոշութիւն գործողներն են.  
«Իմ սիրածը» (կապոյտ երկնքում), «Դարուն», «Իու-  
իմն ես», «Սեղանի երդ», «Դարուն» (մանկական),  
«Կուր երդիչ», «Փոթորիկ», «Չմեռ», «Ափսոս  
աշխատանք», «Զորս հսկայ», «Աստղեր», «Մ.  
Ն-ցի լիշտակին», «Լանեցու երդ», «Արձա-  
գանք»:

Ըրանցից մեծ մասն արդէն մեր քննութեան է ենթար-

կուել. մնացածներից ուշագրութեան արժանի են քայե-  
ռը և անը. ը ձագանքը. երկուսն էլ սիրուն ալլաբանու-  
թիւններ և բնութեան գեղեցիկն կարագրութեան հետ ի-  
միասին ընթերցողի երևակայական թռիչքը սաւառնում  
է գաղափարական աշխարհը և որոշ լինակէտ որոնում:

## ԶՄԵՐ

«Մեր դաշտն ու հովիտ ձինի մէջ թաղուած,  
Ծածկուած են սպիտակ, սառը պատանքով,  
Մէգ մառախուղով երկինքն է պատած,  
Գետը շղթալսծ սառցէ կապանքով!»

Ան սև ամպերի թանձր ծալերից  
Արեկի շողերն էլ չեն թափանցում,  
Դառնաշունչ հողմը մռալ հիւսիսից  
Փշում է կատղած և տիսուր սուլում...»

Բայց կար ժամանակ ալլ էր պատկերը.  
Ուրախ ժպտում էր շքեղ բնութիւնը,  
Երկինքը անամպ, ծաղկում երկիրը  
Եւ շուրջ պալճառ լոյս ու կենդանութիւն...»

Աստուած իմ, ինչպէս երկար է տեսում  
Ալո ձմեռը, միթէ սորան վերջ չկար  
Արիւնը սառեց մեր երակներում,  
Կորած ենք, թէ շուտ գարունը չգալ...»

Բայց անսասան է բնութեան օրէնքը,  
Չմռան պէտք է միշտ գարուն հնանի.  
Չլուսահատուենք, լոյսն է մեր զէնքը.  
Անշոշտ սև օրը երկար չի տեի...»

## ԱՐՁԱԳԱՆՔ

Ախոր ձորի մէջ գնում եմ ես,  
Պարզ զիշեր է ստեղազարդ,  
Բնութիւնը քնած է կարծեա,  
Եւ չորս կողմս լուռ ու հանդարտ...»

«Պատգամախնս, անտես, անլալտ,  
Մէկ հարցմունքիս լաւ ուշ դարձրուա:  
Արձագանքը միայն կիսատ  
Կրկնում է ինձ խօսքս. — «(2) ար ցը ու ա:

աի՞նչ է սպասում խեղճ հալ աղգին,  
Միթէ կործնւստ, ոչ վրկութիւնու  
Արձագանքը որոտագին  
Պատասխանում է. — «Փ ր կու թիւն»:

Թարգմանական բանաստեղծութիւն.

ներից տասնուիննը Պէտէօֆիկ սիրուն ու կարճ  
ոտանաւորներն են, չորսը Շելլէրի, չորսը Հալ-  
նէի, չորսը Լերմօնտվի, երկուսը Պուշկինի.  
մնացածներն էլ մէկ-մէկ՝ զանազան եւրոպական բանա-  
ստեղծների: Դրանցից շատերի մասին արդէն խօսել  
ենք. ալժմ Պէտչօֆիկ մի քանի յաջող թարգմանուած  
հատուածներով գրգռենք մեր ընթերցողների ճաշակը.

## ԻՄ ՍԻՐՏԸ

«Եթէ ձգէի սիրոս դէպի վեր  
Երկնակամարը,  
Արեգակի տեղ նա կը տաքացնէր  
Ամրող աշխարհը»

## ԵՐՋԱՆԻԿ ՄԱՐԴ

«Ես ալն մարդուն եմ ասում երջանիկ,  
Ում վիճակել է բաղզը հալրաբար,  
Ապրելիս սիրել գինի ու աղջիկ,  
Մեռնելիս մեռնել հալրենեաց համարու:

## ՍԷՐ ԵՒ ԱԶԱՑՈՒԹԻՒՆ

«Ազատութիւնն ու սէրը,  
Ահմ իմ ձգտումները.  
Սիրու համար պատրաստ եմ  
Ես իմ կեանքը զոհելու,  
Ազատութեան թանկագին  
Սէրս էլ չեմ խնալելու».

Շելլէրի չորս բանաստեղծութիւններից երեքը ման-  
րամասն զննութեան ենթարկեցինք — «Պատանին  
Վակի մօտա, և ուղորդա և օքանդակի  
Երդը. — ամբողջութեան համար մի քանի խօսք ևս ա-  
սենք չորրորդի մասին — ի՞նք ալն երա:

«Իդէ ալները Շելլէրի ալրական հասակի ամե-  
նասիրուն բանաստեղծութիւններից մէկն է, ուր գովա-  
րանւում են բարեկամութիւնն ու զբաղմունքը  
կամ պարապմունք: Բարխուդարեանն այն գեղեցիկ  
ոտանաւորն աւելի ճիշտ է թարգմանել. շեղումները  
չնչին են և մտքերի աղաւազումն չկալ. մի երկու տեղ  
միալն շփոթութիւն կալ:

Թարգ. «Էլ չկալ իմ մէջ քաղցր հաւատը  
Դէպ չքնաղ ծնունդն իմ երազն երի...».

Երազների ծնունդ անհասկանալի գաղափար  
է. բնագրում ասուած է. «Հաճելի հաւտար գէպ ալն  
էակը (կամ էութիւնը), որ առաջացրեց իմ երազը». —  
Der süsse glaube an Wesen, die mein Traum gebar  
—«Der Entwürfe Flug» նշանակում է ծրագիրների,  
նախագծերի թռիչք, իսկ Բարխուդարեանը թարգմա-  
նում է «մտքի թռիչք»:

Թարգ. «Եւ նորա շուրջը ուրախ պար բռնումու  
ինագ. «Ենչպէս պարօւմ էր կեանքի կառքի  
առաջ (այսինքն կեանքի ընթացքում):

Բարեկամութեան մասին խօսելով՝ Շիլէրը գառ-  
նում է զբաղմունքին, պարտպմունքին և ասում. «Und  
du, die gern sich mit ihr gattest» — այսինքն «գու, որ  
սիրով միաւորւում ես նրա — բարեկամութեան — հետ»:  
Մեր բանաստեղծը թարգմանել է.

«Եւ դու, որ ինձ հետ ես միշտ շաղկապուածու  
«Հանգել են պարառ արեգակները,  
Պատանեկութեանս շաւղին լուսատու,  
Աւազ, ցրուել են իդէալները,  
Նրբեմն սրտիս զարկ տուող ազդու:  
Էլ չկալ իմ մէջ քաղցր հաւատը  
'Իէպ չքնաղ ծնունդն իմ երազների,  
Բոլորը անինալ դարձաւ կողոպուտ  
Իրականութեան կոպիտ ձեռների»:

1900 թ. Բարխուդարեանը բոլորելով իւր վաստա-  
կալի կեանքի վաթսուն և հինգ տարիները, արդէն  
դժուարանում էր ստունձնած պաշտօնները վարել ծե-  
րութեան և նաև մանաւանդ աչքերի տկարութեան  
պատճառով. Հետեւալ տարին նա հրաժարուեց թէ  
քաղաքալին դպրոցներում և թէ ներսիսեան դպրանո-  
ցում վարուծ պաշտօններից: Ալժմ նա միայն շաբաթա-  
կան մի քանի դաս ունի տղալոց առաջին գիմնազիայում:

Քաղաքալին վարչութիւնն ի նկատի ունենալով  
Բարխուդարեանի տասնեեօթամեալ բարեկսիղճ և լռե-  
լեայն ծառալութիւնը՝ սկզբում իբրև քտղաքալին բոլոր  
տարրական դպրոցների վերատեսուչ և ապա նոյն դպրոց-  
ների տնտեսական մասի վերահսկիչ, նշանակեց նրան  
լիտատար կենսաթոշակ, տարեկան վեց հար իւր  
ըուրըլի, ցմահ:

Ներսիսեան դպրանոցը նոյնպէս գնահատելով նրա քսաններկու տարուալ անխօնջ ուսուցչական աշխատանքը, տարեկան չորս և հարեւեր լիսուն բութի կենսաթողակ նշանակեց, ցմահ։ Նոյն դպրանոցի ուսուցչական խումբը հանդիսաւոր հրաժեշտի ճաշ տուեց իւր սիրելի ընկերակցին։ ճաշի միջոցին՝ ի նկատի ունենալով Բարխուղարեանի երկարամեալ ծառալութիւնը դըպրոցական և գրական ասպարիզում, ցանկութիւն լայտնուեց տօնելու նրա գրական-մանկավարժական գործունէութեան քառասուններին ամեակը։ Դպրանոցի հոգաբարձութիւնը համակրանքով վերաբերուելով այդ գաղափարին և գնահատելով Բարխուղարեանի անկեղծ ծառալութիւնը ի խրախոյս ուսուցչական ծանր աշխատանքի և աշակերտներին երախտագիտութեան օրինակ լինելու համար՝ առանձին և ներսիսեան դպրանոցի կեանքում չեղած, դպրոցական հանդիսով տօնեց մերակեզարդ բանաստեղծի յօբելեանը՝ դպրանոցում։ Հանդէսը տեղի ունեցաւ բարձր դասարանների աշակերտների, ուսուցիչների և հոգաբարձուների ներկալութեամբ։ Կարդացուեցան յօբելեարի բանաստեղծութիւններից, աշակերտական խումբը քառաձախն երգեց Ս. Եկմալեանի նոր ձայնագրած պապոյտ երկնքումը։ ուսուցիչներից մէկը բանախօսութիւն արեց, երկրորդը պաշտօնակիցների ու նախկին աշակերտների կողմից ուղերձ կարդաց։ Հոգաբարձութիւնը նոյնպէս զբաւոր ուղերձով շնորհաւուեց։ Հանդէսը փակուեց հոգաբարձութեան նախագահի համառօտ ճառով։ Ալեգարդ բանաստեղծն ևս բեմ բարձրանալով կարդաց մի հատուած «Փառուստի» թարգմանութիւնից։ ուսուցիչների և ոգեգորուած աշակերտների ծածկուեցան պատկառելի ծերունու վերջին խօսքերը։

Ներսիսեան դպրանոցը գեղեցիկ կերպով կատարեց իւր բարոյական պարտքը. ալժմ հերթը հայ հասարակութեանն է։

Հայ հասարակութեան վրայ ևս բալոյական պարտք կալ երախտագէտ լինելու մի հասարակական գործչի, որ իւր համարեա ամբողջ կեանքը նուիրել է հայ մանուկների դաստիարակութեան գործին և մեր գրակա-

նութիւնը ճոխացրել է եւրոպական մտքի ամենաընտիր երկերով։

Եթէ Բարխուդարեանն իբրև ինքնուրոյն բանաստեղծ աչքի ընկնող տեղ չի գրաւի մեր նորագոյն գրականութեան մէջ, իբրև թարգմանիչը առ ատեղ ալժմ առաջինն է նաև նրա անունը հայ մատենագրութեան սէջ միշտ շաղկապուած կմնալ Շիլլէրի անմահ անուան հետ։ Նատ սիրուն գրականական գործ կլինի, եթէ Շիլլէրի մի կամ երկու ամբողջ պատկերազարդ հատոր կազմուի՝ Բարխուդարեանի թարգմանութիւններով։

Բարխուդարեանի վերջին թարգմանութեան, նրա գուռի գործոց ի մասին չենք խօսում, որովհետև «Լումայ»ում բաւականաշափ գնահատուել է. «Խառստը» մի այնպիսի մատենագրական դանձ է, որ հայ գրականութիւնը երբէք չի մոռանալ նրա առաջին բանաստեղծ թարգմանչին։

Մեր ծերունի բանաստեղծ-ուսուցչին ցանկանում ենք երկար կեանք և մաղթում նրան այնքան ոլժ, որ կարողանալ Խառստի երկրորդ մասն էլ նուիրել հայ գրականութեան։

«Հեռու աշխարհի զուարճութիւններից,  
Թէկ ոչ հեռու նորա վշտերից  
Գիշեր և ցերեկ փակուած առանձին,  
Նուիրուած էիր դու քո սուրբ զործին»,

ԽՍԱՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՒԽԵԱՆ

